

ՏԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիոյ համար	12 Ժր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Մասնատպակաւի համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Աւերիկայի համար	3 զր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	1.50 "

Երանցումն տոյր առա ինն երեսն համար 40 ս. իսկ վերին երեսն համար 20 սանթիմ հ. երեսն անգլիական լեռն համար 20 0/0 զեղչ կրչ

Քաջ վառնայի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐՄ

R. P. Kalémecarian, Mechitharistengasse W. 4. (Aubriche)

Նամակ եւ դրամ դրկի հաւաքութեան համար

Редация на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Մասնատպակաւի համար
(20 ՍԱՆԹԻՄ)
Պոչխարիոյ համար
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱՆԻՆ ԶՈՐԵՔԵՐԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Գրութեան համար

ՇԱՐՄԻՆ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԿԻՆԸ ՊԵՏՐ Է ԿՈՆՍՏԱՆՍՊՈԼԻՍ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներուն կը յիշեցնենք որ ներկայ փետրվար 1-ին լրացաւ ճարտարաբանական տարեշրջանը եւ կը խնդրենք անոնցմէ որ փութացնեն բաժանորդներու վճարումը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ մեր բաժանորդները պէտք է դրամները ուղղակի մեզ ուղարկեն:

Դիւրութեան համար անոնք կարող են վառնայի Ազգ. պանթայէն գանձարի 15 ֆր. (3 տոլ.) շէքեր ուղարկել:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ բաժանորդները դիւրութեան համար կարող են ուսական թղթադրամ զրկել ապահովագրութեան նամակներու մէջ: Ռուսական փողի հաշուով 6 րուպլի է ճարտարապետական բաժանորդները:

Մտերմութեան համար կրկնել, որ ճարտարապետական բաժանորդները կանխիկ է եւ իր հասցէին հետ բաժանորդներուն ալ չը զրկողներու զիմումները անհետեւանք կը մնան:

Քէօնթէնճէի մեր գործակալն է Պ. Կրիզոր կարապետեան:

Այդ տեղի մեր բաժանորդներէն կը խնդրուի իրենց հաշիւը վճարել նոյն պարտին:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

Դ.

Մենք համառօտակի ցոյց տը ինք, թէ Ռուսիոյ մէջ յիշափոխական տեսակետով կազմակերպութեան ստեղծման հարցը մտադրուած է իրենք ուսերը եւ թէ կայսրութեան հպատակ ժողովուրդները: Ի՞նչ հողի վրայ կանգնած են այս կազմակերպութիւնները: Ընդարձակած աւել երկրին մէջ կապրին բազմազան ցեղեր, բազմազան ընկերութիւններ տարբեր միջավայրերու մէջ, տարբեր լիզուներով, տարբեր շահերով, տարբեր պահանջներով: Ուստի անկարելի էր, որ գործող յեղ. կազմակերպութիւնները կեցած ըլլային միեւնոյն հողի վրայ, իրենց դրամ ըլլային միեւնոյն նպատակը—անոնց մէ իւրաքանչիւրը ունի իրեն

յատուկ ծրագիրը եւ կը գործէ ըստ այնմ:

Անոնք ուս յիշափոխականները: Իրամագլուխը եւ մեծ տրիւնաբերութիւնը մտած ըլլալով Ռուսիոյ մէջ արդէն դրամութեան հարցը կազմակերպութեան նպատակը—այն է, սօցիալիզմը: Իսկզբան ուս սօցիալիստները մտան ժողովուրդի մէջ եւ անոր մօտ իր վիճակին գիտակցութիւնը արթնցնելով, հաւաքական շահագործման դիւրին միջոցներ ուսուցանելով կու գէին խաղաղ պրօպագանտը առաջ տանել, ձգելով, որ յեղաշրջումը ու ժամանակի էջօլուցիան կատարեն իրենց դերերը: Իայն անոնք քիչ առնէն անսան, թէ անհրաժեշտօրէն պէտք է բազիլում ունենան կառավարութեան հետ, որու պաշտօնները սկսած էին արդէն իրենց դէմ սաստիկ հալածանք, ուստի սօցիալիստներն ալ իրենց կողմէ կու յայտարարեցին կառավարութեան դէմ: ասով անոնք դարձան յեղափոխական սօցիալիստներ: Պէտք է շփոթել: Սրտպալի սօցիալիստները յեղափոխականներ չեն, անոնք պարլամենտական միջոցներով, գործադուլներով եւ խաղաղ ցոյցերով կը կռուին կապիտալիզմի դէմ եւ կը պաշտպանեն իրենց դասակարգային շահերը: Անոնք ոյժի կամ ահոսի դիմել անոնք կը համարեն ամենամեծ յիմարութիւնը: Եւրօպային իրաւունքալ ունի այդպէս մտածելու: քաղաքակրթական այն շրջանը, ու կը գտնուին այսօր ուսերը, անոնք շատոնց անցուցած են:

Այսպէս ուրեմն ուսական կազմակերպութիւնը դրոնցաւ սօցիալ. յեղափոխական հողի վրայ Ռուսաստանի սօցիալ դէմօկրատիայի վերջերս տեղի ունեցած երկրորդ ընդհանուր ժողովի մէջ անոնք աւելի առաջ գացին եւ իրենց իբրեւ մօտաւոր նպատակ հռչակեցին՝ տապալումն ցարիզմի եւ հաստատումն ռամկավարական հանրապետութեան: Իայն

ասով չէր լինցած, Ռուս յեղափոխականներու առջեւ ցցուած էր ուրիշ լուրջ ու ծանրակշիռ հարց մըն ալ, այդ էր սոցիալ-նուլթեան հարցը: Ինչպէս յիշափոխականները շնայելով իրենց բարի տրամադրութիւններուն, շնայելով իրենց միջազգային լայն մտածումներուն՝ էութեամբ մնացած են թունդ նացիօնալիստներ: Հայ ուսանողներ ունեցած են «Իսկրա» եւ այլ ուս սօցիալիստ օրգաններու ղեկավարութիւններու հետ վիճաբանութիւններ, որոնք պնդել են զալ ձուլուիլ ուս յեղափոխական մէջ եւ հաւաքական ուժերով աշխատել, քանի որ ցարիզմի տապալումով պիտի տիրէին ամէն ազգի համար հաւասար իրաւունքներ: Ազգներ, որ այդ մէկ կէտը շատ վիճելի է, երբ սակայն նոյն այդ միջազգային սօցիալիստներէն պահանջուած է իրենց ծրագրին մէջ ներմուծել հպատակ ազգերու համար անկախութիւն, ունոնք փրփրած են եւ կատաղած, խորհելով թէ մի՞թէ՞ կարելի է այդպէս պահանջ գնել: Այս այսպէս ըլլալէ ետքը իհարկէ ամէն խորհող մարդու համար վերջին աստիճան տարօրինակ եւ անհասկնալի պէտք թուին այս ու այն հայ սօցիալիստ օրգանի մէջ յայտնուած այն միտքերը, ըստ որոնց հայերու ոտքով ձեռքով պէտք է ուս սօցիալիստներու գիրկը նետուիլ, անոնց հետ միանալ, անոնց հետ միացնել կասսան եւն ու փրկել: Դարձկութիւնը:

Ռուսը իրաւունք ունի ընտրութեամբ ի իր շահերուն վրայ, նոյն իսկ զանոնք քօղարկել միջազգայնական միտքերու տակ, բայց հայը պէտք է լայն խորհի եւ իր ուժերը դնէ ուս յեղափոխականներու տրամադրութեան տակ: Տարօրինակ հակասութիւնն «հա», պիտի ըսեն մեզ նորէն մեր սօցիալիստները: «հա», նեղ մտածող նասիօնալիստներ, «հա» նեղ ազգասէրներ:

Կը պատասխանենք, այո՛, մենք ճակատաբաց եւ ջերմ կերպով կը պաշտպանենք գարեբուրնթացքին մէջ օտարներու ձեռքով անգութ կերպով տանջուող Հայութեան շահերը եւ գանոնք վեր կը դասենք քան ուրիշ ունեցողներու թեան կամ դասակարգի շահերը եւ կը քանք մեր այդ միջազգայնականներուն, ազատամիտներուն, թէ ազգերու անկախութեան ու ազատութեան հարցը նոյնքան վեհ ու բարձր գործ է, որքան կապիտալի ծանրութեան սակ ընկճուող դասակարգելու հաւասարութիւնը կամ օրական ութամեայ աշխատանքը: Առաջինը կը բանայ երկրորդին ճամբայ: Ազգայնական հարցը կայ, պիտի մնայ եւ պէտք է անհրաժեշտօրէն վճարել: մեր ըսածը լոկ ճշմարտութիւն է, մեր այս դատը պաշտպանուած է նոյնիսկ սօցիալիզմի վարդապետներէն:

Ահա նորէն նացիօնալիստներ, ահա նեղ մտածող ազգասէրներ: Ընդունինք լուրջ մը թէ այդպէս է, բայց ձգենք, որ ազգայնութեան գաղափարը պաշտպանէ ի գնացի Դաշինքի, սօցիալիստներու վարպետներէն մին, լեհ սօցիալ. տեմօկրատական կուսակցութեան ամենէն փայլուն ներկայացուցիչը— «Գրողը Լեհացի մըն է. մարդիկ գիտեն, որ ան իր հայրենիքի անկախութեան վրայ պիտի գրէ, հարց մը, որ շատոնց ձեռք բերուած եւ պէտք էր այլեւս հինցած ու կորուած ըլլար», կըսէ Դաշինքի եւ կը շարունակէ: «Բայց այնուամենայնիւ այս հարցը բոլոր ազգերու սօցիալ. տեմօկրատիայի մէջ տակաւին նոր պէտք է լուծուի, ի՞նչու պէտք է լուծուի, սօցիալ. տեմօկրատիայի համար այդ ի՞նչ աւելորդ աշխատանք է: Տեսէք թէ ինչու, որովհետեւ «ազգը կը կազմէ, նման միջոց լորտային ճնշման, բարոյական ուժի ճնշում մը, առանց որուն անհատը կայլառու էր եւ

բարոյապէս կը փճանար. Բոլոր ծրագիրները, դիտարկութիւնները անգիտակցաբար ազգ. սահմաններու համեմատ և ազգային ճնշման տակ կը կուտին ու կը հաշտուին, և միջազգայնութիւնը որպէս ազգ. յատկութեանց նուազութիւն հազիւ քանի մը անհատներու քով գոյութիւն ունի... «Ազգայնութիւնը պատմական դաս մըն անուանելէ ետք կը շարունակէ Դաշինքի: «Ժողովուրդ մը վաղ կամ ուշ պէտք է օտար տիրապետութեան լուծը թօթափէ, ապաթէ ոչ երբէք կատարեալ չի կրնար ըլլալ:» Դաշինքի խօսելով Վարդ Գարու մէջ կատարած ազգ. յեղափոխութիւններու վրայ և յիշելով Իտալիոյ, Գերմանիոյ, Աերպիոյ եւն ժողովուրդներու ազգային միութիւնը, կը յարէ, «անխկին բըզկտուած կտորներու միացումը պատմական անհրաժեշտութիւն մըն էր, և պէտք էր կատարուէր, իրր նախապայման աւելի հեռաւոր դարազայման... Իբրեւ պատկազ. զազափարին, ամէն սեղ ազգի կամքը կը գտնենք միջ զէպի ինքնազճոզութիւն, ծառայում և ազատութիւն:»

Ահա՛ Եօրէն նեղ մտածող նացիօնալիստ մը. ահա նորէն ազգասէր մը. սովորական դարձած այս ֆրեզը Դաշինքի կը նախազգայ, որ իրեն դէմ ալ պիտի չպարտուի, իրեն Գալիցիոյ լեհական սօցիալ-դեմօկրատ կուսակցութեան ստեղծողին. անոր համար ան կուզէ այդ յանդիմանութեան առաջնութիւնը պատասխանել ըլլալ ու կը շարունակէ. «այն յանդիմանութիւնը, որու ազգասէր սօցիալ զեմօկրատ մը կը հանդպի այն է, որ սօցիալիզմի էութիւնը «զատակարգային կոչիւն է», զոր ազգային հարցը մէջ տեղ բերելով կարելի է միայն տկարացնել. «Բայց ի՞նչ նպատակի պիտի առաջնորդէ մեզ զատակարգային կոչիւնը: Այս հարցը կուտայ իրեն Դաշինքի և կը պատասխանէ. «Այդ նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ զատակարգութիւն ոչ շարժումը և ժողովուրդներու մէջ իրական հաւատարմութեան յայդանակը. զատակարգային կոչիւն միջոցով մենք կաշխատինք և սղզի համար. Դատակարգային կոչիւնին բնութիւնը անկողնային բան մըն վերջ ի վերջոյ ի՞նչ սօցիալալիստ մը զատակարգային կոչիւն աւելորդ բան համարէ: Այո, և տեսէք թէ ի՞նչու: «Որովհետեւ պրօլետարիատը պիտի շնչէ զատակարգային տիրապետութիւնը և իր տարած մասնակի յայրմանակներով իրաւունքներ ձեռք պիտի ձգէ, որոնք ժամանակի ընթացքին երբէք վիճելի չպիտի գնահատուի և ազգային սովորու-

թիւններու պիտի փոխուին:»

Մենք չենք կարծեր, որ ուսաստէր հայ սօցիալիստները Դաշինքին ալ նեղ մտածող նացիօնալիստ մը անուանեն:

Ազգայնական հարցի մեծ կարեւորութիւնը և անոր լուծումի պատմականօրէն անհրաժեշտ ըլլալը ականատի սօցիալիստի մը իսկ վկայութեամբ հաստատելէ ետք, ալ զիւրին է որոշել հայ յեղափոխականներու դիրքը զէպի ուս սօցիալ-դեմօկրատները: Բայց այդ մասին յաջորդիւ:

Մարգարէտեմի

ԿԱԼՈՒԱՅՆՆԵՐՈՒ ԳՐԱԴՈՒՄ ԵՒ ԿԱՌՈՒԻՆՈՍԱԿԱՆ ԱԹՈՒ

Կովկասայնոց եկեղեցապատկան կալուածներու ուսուցական տէրութեան կողմէ զբաւան և Պօլիէնիան փոխելով աւելի սեղմեալ նոր օրէնքներ սահմանելու խնդիրը ամեն հայու մտածման միակ առարկան պէտք է դառնայ. Հայութեան ներկայ անկողնային պայման և տարածողութիւն ունին այդ երկու խնդիրները, երկուքն ալ կը պատկանին ընդհանուր հայութեան:

Հայութեան ներկայ սերունդը ապագային պատմութեան առաջ դատարարութիւն չը լինելու համար, պարտաւոր է ամէն հնարաւոր միջոց ի գործ դնել իր ընդհանուր իրաւունքները պաշտպանելու համար, եթէ չը կարողանայ իսկ պաշտպանել. գէթ իր պարտականութիւնը կատարած կը լինի:

Եկեղեցապատկան կալուածներու բռնի գրավման դէմ հայերը շատ բան կարող են ընել. նախ՝ ուսուցատանէն դուրս գտնուող հայերը, ինչպէս Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Երբօն իր կողմէ պարզել է պարտաւոր են զիսկ Լազիկ իրաւարար առեւտրի, անոր առջեւ փաստերով ապացուցանելով, որ ուսուցական կառավարութիւնը միջազգային օրէնքներու հիման վրայ իրաւունք չունի կովկասի հայերու բոլոր եկեղեցապատկան կալուածները գրաւելու: Որովհետեւ Ս. Էջմիածինը գեոմետրիոյ տիրապետութեան տակ չը մտած, բարձրագույն գիւղեր և անասուններ նուէր ստացած է Ռուսաստանէ դուրս գտնուող հայերէն և կաթողիկոսներէն, ինչպէս նաև պարսից Շահերէն. այս մասին Ս. Էջմիածին տպարանէն լոյս տեսած գիրք մը կատարելապէս կը պարզաբանէ խնդիրը, հրատարակած լինելով Շահերու ֆէրմանները և կաթողիկոսական կողմերը (գծախտարար այդ գրքի անունը և հեղինակը չենք յիշեր, թէ և կարգացած ենք, որքան աղօս կը յիշենք կաթողիկոսի մը աշխատատիրութիւն է, կարելի է հարցնել և զանալի Բացի այս, աշխարհիս շոր կողմը սփռուած հայերէն յանուս Ս. Էջմիածին կամ անոր այսինչ - այնինչ հաստատութեան շատ մը նոր նուէրներ եղած են, այսինքն Ս. Էջմիածին ուսուցական տիրապետութեան տակ մտնելէ յետոյ: Ս. Էջմիածնայ կալուածներուն միայն միաբանու-

Իեան չը պատկանիր, այլ ընդհանուր հայութեան պատկանիր նոյնիսկ ընդունած է ուսուցական տէրութիւնը իր Պօլիէնիայով: Ուրեմն, ուսուցական տէրութիւնը պարտաւորուելու է կամ նախկին դրութիւնը հաստատել և կամ ճշգրիտ Ռուսաստանէ դուրս գտնուող հայերու իրաւունքները, անոնց ինկած բաժինները իրենց վերադարձնել:

Երկրորդ՝ Ռուսաստանի մէջ սպարող հայերը պարտաւոր են բռնի ուժով զիսկողն կառավարական բոլոր ունեւորութիւններուն թէ կալուածական և թէ եկեղեցական խնդիրներու մէջ:

Կալուածական խնդրէն զատ աւելի ծանրակշիւ խնդիրը կաթողիկոսի հեղինակութեան շնչուելու պարագան է:

Ամենայն Հայոց կաթողիկոսի հեղինակութիւնը շնչուելու և բոլորովին վերացնելու համար ուսուցական կառավարութիւնը ժամանակին սկսած է ամէն միջոց գործ դնել. այդ հեղինակութեան առաջին հարուածը առողջ և կաթողիկոսութիւնը պարզ վանահայրութեան մը վերածողը և դաժն Պօլիէնիան, որուն դէմ թէ և մատթնու են Կէնթը կաթողիկոսները բողոքած են, բայց այդ օրէնքը իրր ծանր լուծ մը միշտ ճնշած է մեր կաթողիկոսները: Պօլիէնիային հետեւած են ուրիշ կառավարական կարգադրութիւններ և ի միջի այլոց կալուածական զբաւան կարգադրութիւնը: Իսկ այս օրերս ուսուցական կառավարութիւնը պատրաստած է իր վերջին և վճռական հարուածը, այն է, Պօլիէնիան փոխելով նոր օրէնքներ հրատարակելու նենդ զիտաւորութիւնը:

Կաթողիկոսի հեղինակութիւնը և հետեւաբար հայոց միութեան կեդրոնական կապը հաստատուն պահելու համար, հայերը պարտաւոր են կաթողիկոսական աթոռը փրկել Ռուսիոյ բռնական և կործանիչ ճիւղերէն. ասոր համար հարկ կը լինի այդ աթոռը փոխադրել բոլոր կաթողիկոսներէն ազատ հողի մը վրայ, այն է, և երկրական մի որ և է ազատ քաղաքի մէջ հաստատել:

Այս փոխադրութիւնը ներկայ և ապագայ ոչ մի վտանգ կը ներկայացնէ. պատմութիւնը դժբաղդարար մեղ շատ օրինակներ տուած է այդ աթոռի փոխադրութեան մասին, ամէն անգամ, որ այդ աթոռի հեղինակութեան վաւանը մըն է սպառնացեր, անմիջապէս զայն տեղափոխել են հայերը և այս սեղմութիւնը թիւններով է, որ մինչև ցարդ աթոռը պահած է իր հեղինակութիւնը և շնչուելու իրենց հայութեան միութեան կապ:

Ուրեմն, կաթողիկոսական աթոռի փոխադրութեան կենսական խնդիրը լրագրութեան նիւթ դարձնելով, աշխարհի չորս ծայրերը գրտնուող հայերս պէտք է մտածենք և զազափարներ փոխանակենք այդ մասին, մինչև որ վերջնական ու վճռական որոշումը մը յանդիման մի համուս և ալ որ որոշումը գործադրենք խօսքէ դուրս անցնելով:

(Շարունակելի)

ԲՈՒՈՐ ՃՆՇՈՒԱԾՆԵՐ ՄԻԱՅԷ՛Ք ՏԵՒՕՐԸ ՏԵՒՕՐԻ ԴԷՄ

Նոյեմբերի 28ին, (Դեկտ. 11, 1903) երկրոյեան ժամը 9ին, Գանձակ քաղաքում ձիաքարչի վահօնում տէրօրի ենթարկւեց յայտնի մատնիչ և դաւաճան Սէրգէյ Ակօպով, որի պատճառով Գանձակի հայ ազգաբնակիչները մէջն օր սուսուս էր. այդ անպիտանի յաղղութիւնը չափ ու սահմանից անցել էր. հարկաւոր մարդիկ նրա լրատուութեամբ բանա ձգւցին, մարդ չիւաց Գանձակում, որից նա սասնեակ լուպլի չպոկէր:

Բռնակալ կառավարութեան կողմէ բարձր շրջանները թանգ էին գնահատում նրա ստոր ընդունակութիւնները. ոչ միայն նահանգապետի մօտ, այլ և Կալիցիին մօտ նա յատուկ ընդունելութիւն էր գտնում: Որչափ թեթեւ զգաց իրեն Գանձակի ազգաբնակիչները նրա սպանութեամբ, այնքան էլ ցաւեց կատաւարութիւնը և ցոյցալից թաղում սարքեց. — բայց դազաղի յետեւից զնում էր ոտախկանապետը իր օգնականներով — պրիտաւորով, նրա յետեւից բոլոր սարսփնիկները, սերբը բաց, իրենց գլխաւորի՝ օֆիցէրի հետ. բացի 2-3 ազգականներից, որոնք ասօթը երեսին կուչ կկամ քայլում էին մայրով, ոչ մի մարդ չէր ուղիղում սպանածին. 3 պսակ դրած զազաղի վրայ՝ մէկը ոտախկանապետից, միւսը հահանգապետից, երրորդը ստրածիկներինց, շնչուած էին սպանածի ինչ լինելը. նշանակու էր այդ խաղման յուղարկաւորութիւնը — ոչ մի արտասուք, ոչ մի ցաւակցութիւն, Հասարակութիւնը ամբողջովին բացակայութեամբ արտայայտու էր իր զւանքը զէպի այդ Յուդան. և նա թաղւեց ոչ ինչպէս մարդ, այլ ինչպէս ներկայ սպանակուած ոչ ժողով ստեղակատրեալ ստոր ներկայացուցիչ:

Կերոյ լինալ տէրօրը մի շարք ուրիշներ հետեւ (Կալիցին, Տէր-Ալէքսանդր, Փոթոյեան, Կորիս գիւղի քահանայ, վարդապետով, վէյդէնբաուս, Կորեւում թատրոնական խմբապետ Կրսո օ վը տէրօրի ազդեցութեան տակ, փոխեց նշանակւած հայ յակեր վէյլիկոյի թատրոնապետը, իսկ սկզբնապէս լրագրի շոր խմբապետը՝ Իւչիով թ ուղեց իր պաշտօնը, ևն.) Կալուս հետեւանք է այն դիրքի, ու բռնած ունի կառավարութիւնը զէպի ժողովուրդը առհասարակ, լինի դա հայ, ուսու, վրացի, լեհ, ֆին, ևն.: Վերջին տարիներ ընթացքում կառավարութիւնը աշխատում է սարսփնիկ զիտակցութիւն արտայայտող ամբողջ սրտում կազակները ձեռով, անսեղ սպանութիւններով, բանտերով, կաշառքներով, էկզկուցիաներով, (Չօք բնակեցնել տալ պատճել ուզած գիւղերու մէջ, արտօնելով զօրքի աճն տեսակ նեղութիւն տալու գիւղացիներուն) Արստրերով և ուրիշ հօգար տեսակ լրբութիւններով. նա ձեռք է տնել բոլոր միջոցները, որպէս զի ժողովուրդը սարսփնի, շնամարձակի արտայայտել ոչ սի բուրքի նշոյլ անգամ: Կայսրութեան ջորտ սեղերում ամող ըողքները, կալուները, ժողովրդի արդար պահանջները բարբարոս կատաւարութեան շատ են անհանգըստացնում. նա նպատակ է դրել խեղդել բոլոր ինչ որ չէ ստորացնել, չէ անբարոյակաւացնել. չէ լուծել ընդհանուրի հետ, չէ կորցրել իր ա-

ոանձնայապակութիները : Բայց կենսաբան ամեն օր հիասթափեցնում է նրան . ցոյց է տալիս թէ նա նպատակի հասնելուց շատ հեռու է , և քանի զնում հեռանում է . նրա բոլոր միջոցները ամեն տեղ զարգացնում են անբաւական տրանջող տարր և ժողովուրդը բացի ամբողջային բողոքներից արտայայտում է իր ատելութիւնը դէպի կառավարութիւնը ուրիշ միջոցով , որի անունն է տէնոր (սարսափ) : Ժողովուրդը բռնակալութեան սկիզբի ամենաթունոտ պաշտպաններին ենթարկում է անարգութեան , ձեռնի , սպանութեան . այս բոլորը ահագին ապաւորութիւն է թողնում բոլոր պաշտօնեաների և ոչ ժիւղ պաշտպանների վրայ . նրանք եւս համոզում են որ ամենակարող չեն , որ ժողովուրդը անպաշտպան չէ նրանց բարբարոսութիւնների առաջ , ինքը ժողովուրդն էլ է համոզում , բռնակալութիւնն է ստանում , ողբւարում բռնակալների դէմ այդ ցոյց տրւած ոյժից , որի վրէժխնդրութիւնից չէ կարող փոխել ոչ մի արարած , որքան էլ նա շրջապատւած լինի ամեն տեսակ զինւորների և որքան էլ հաստ մորթիլի տակ թագնուած լինի նա :

Տէնորը ոյժը նսեմացնում է նսեմացնում է մօկրատները , թող այդ մեր կողմից իրեն յիզարիտական կուրի միջոց չձանաչեն տէնորը , թող իրենց վերջին յայտարարութիւններում ակամայ չընտելով տօնօրիսական գործունէութիւնը , նոյնիսկ իրասակար համարեն տէնորը ընդհանուր ապստամբութիւն առաջացնելու խնդրում : Մենք հաւատացած ենք որ շատ ժամանակ չէ անցնելու և նրանք կը դիմեն տէնորին և զինքին , բռնակալ կառավարութեան սարսափեցնող միջոցներ և զինքի դէմ :

Տէնորը , եթէ միայն ժամանակի պահանջին և յեղափոխական կազմակերպութեան լայն արածուելու բնական արտայայտութիւն է , նա ան-

պայման մտեցնում է ընդհ. ապրասամբութիւնը , նա կործանում , ջախջախում է միապետական բռնակալութեան մեքանիզմը , նրա տեղը դնելով ժողովրդական լայն սկզբունքներով զծագրւած դաշնակցական ուսկալարութիւնը :

Հայկական ինֆեւպաշտպանութեան կենտրոնական կոմիտէ (Հայրենիք)

Տէր Նախորդ թաղական խորհուրդը հրաժարւած ըլլալով , նոր ընտրութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի , փետրվոր 22ին , Ազգ. վարժարանին մէջ .

Գուհները պիտի ընդունուին առատեան ժամը 8էն մինչ ց'ժամ 2 կէսօրէն յետոյ և անմիջապէս քուէհամարի պիտի սկսուի :

Գուհարկող պարտին անձամբ բերել իրենց քուէն : Նամակով քուէ չընդունուի :

Ի դիւրութիւն ընտրողաց ի ստորև կը տեսնէք ընտրողական ժողովոյ պատրաստած ընտրելիաց եռապատիկ ցանկը , որո՛վք որ անձերու ալ ընտրողք կրնան իրենց քուէն տալ , բաւական է որ նոյն անձը ընտրելիութեան հանգամանքէ զուրկ չըլլայ , այսինքն պատուաւոր և միայնգամայն 30 տարին լրացուցած ըլլայ :

Կը հրաւիրուիք զձեզ որ փութաք Ձեր ազգային ընտրողական իրաւունքը ի գործ դնել նոյն օրը , որոշեալ ժամուն :

Վառնա , 12 փետր. 1904
Ի ղրմաց ընտրողական ժողովոյ Նախագահ
Մարտիրոս Գնն. Մարտիրոսեան

Յանկ եռապատիկ ընտրելիաց Աբէլ Ա. Աբէլեան
Աթանազիէն Ֆրոնձեան
Արշակ Աստուրպեան

Աւետիս Ազիզեան
Աւետիս Կիւմրիչեան
Գրիգոր Էմէքեան
Գրիգոր Յովհաննէսեան

Խաչիկ Ազնաւորեան
Կարապետ Փափազեան
Կարապետ Սանտալճեան
Կարապետ Շիրինեան
Մատթիա Սուքիասեան
Մուրա Մնատի. Սարգիսեան
Յակոբ Թասարճեան

Յարութիւն Էնկիպարեան
Յովհաննէս Գարամանեան
Յովհաննէս Ճամճեան
Յովհաննէս Գոշումեան
Նիկողոս Գէսթանեան
Սարգիս Գարիբեան
Սարգիս Հաճըղուեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Քօնսթանցա . 8 փետր. 1904

Ամսոյ 5ին եկեղեցոյ աւարտումն յետոյ , քաղաքիս Հակոբեան Արաքս սրահին մէջ երկու սեռէ հոծ բազմութիւն մը կըսպասէր Վարդաւանց տօնի աթիւ սարգուտ հանդէսին , երբ աչակերտք ու աչակերտուհիք շքեղ մարշով սկսան «Բամբ Որոտանը» եւ զըրգըրով ամբողջ բազմութիւնը մտան սրահը ու սուցչական մարմնի առաջնորդութեամբ , ուր ներկայ էին թաղական խորհրդոյ անդամները : Ուսուցիչներէն մէկը բացաւ հանդէսը , Պարոնը Վարդաւանց հայրենասիրութեան ու կրօնասիրութեան վրայ հակիրճ ասուցութիւն մը ընելէ յետոյ պատկերացուց Հայաստանի ներկայ վիճակը , աւելի ծանր ու վտապաւոր և հրաւիրեց ժողովուրդը աջակցել յեղափոխութեան : Յաջորդեցին երգեր և արտասանութիւններ Գամառ-Գամիպայէն :

Առաջ վերցուց երկրորդ ուսուցիչ մը , որը խօսելով գոյութեան կոռուի մասին , յայտնեց որ ազգային գոյութեան կոռուի սկսած է հարիւր յիսուն տարի առաջ Սիւնեաց նահանգին մէջ , Դաւիթ պէկի առաջնորդութեամբ : Սյն ատեն հայերը կրկնապես իրենց երկիրը պաշտպանել , հետո պահելով օտարներու ոտքը , բայց չզիմանալով պարսիկ խաներու ինթրիքներուն ու շրջակայ բարբարոս ժողովուրդներու հալածանքին տեղի առին ու քաշուեցան Հայաստանի աւելի լեռնային ու անմաշելի տեղերը առանց կորսնցնելու իրենց ասպետական քաջութիւնը եւ կոռուելու ընդունակութիւնը . զէպքեր որոնք կրկնուեցան նոր օրերս ալ Զէյթունի մէջ 95ի պատերազմին : Պարոնը հրաւիրեց ժողովուրդը Հայաստանի համար գրամ տալ եւ զէնք ձարել . յետոյ երեւեցան երկու աշակերտուհիներ , որոնցմէ մին սեւ շքաշքով գլուխը սպտած աթոռի մը վրայ Արաքսը կը ներկայացնէր , զէմ առ զէմ խօսեցան Գամառ-Գամիպայի «Մայր Արաքսին» «Ձայն տուր ս'մ ծովակը» երգուելէ վերջ աչակերտուհի մը ուղղուելով զէպի Արաքսը արտասանեց Զօգանեանի «Օրօր»էն մաս մը՝ յստակ առողջութեամբ և բոլորովին լնական . այս տեսարանը յուզեց ներկաները :

Գրաւոր կերպով խօսեցան նաեւ երկու ուրիշ պարոններ , որոնցմէ մին երկրի ներկայ դրութեան եւ ժողովուրդի կոռուելու տրամադրի լինելուն վրայ կանգ առնելով , յարեց , որ արիւնալից տեսարաններուն առջեւ պիտի գտնուէինք գուցէ գարնան , այժմ մեծ պահանջ կայ գրամի ու զէնքի , արդեօք պիտի կրնանք մեր պարտականութիւնը կատարել :

Ներկայ եղող քահանայ քանի մը խօսքերով—բայց տարտամ խօսքերով—փակեց հանդէսը :

Ն. Եկայ մը

ՄՐՆԵԱՂԻՆ
(Պատմութեան քննարկ)
ԱՆՏՈՆ ԶԵՆՈՎ
ԹՆՆԱՍԻՆԵՐԸ

Ապօկիին ձանր յուզումէն կը դողդղար . այս դողդղոցն ու շեշտը աւելի համոզիչ էին քան թէ բառերը : Ապօկիներ անկեղծ էր , բայց զարմանալի է , արտասանած որ և է նախադասութիւնը անբնական և զուրտ կերպով իրենց անտեղի զարդարանքներով , որոնք պարզապէս թէ՛ բժշկի բնակարանի մթնոլորտը և թէ՛ մահամբձ մանկամարդ կիներ կը վերաւորէին , ինքն ալ այս կըզգար և , անհասկնալի ըլլալու վախէն իր բովանդակ ոյժով կաշխատէր ձայնին փափուկ և զնքոյչ հնչիւն մը փոխ տալ , որպէս զի , եթէ ոչ բառերով դունչ արտասուչ տօնով ազգել կարողանայ , Բնդհանրապէս ֆրազները , որքան ալ անոնք զեղեցիկ և խոր ըլլան կազդեն երբ մարդիկ սովորական տրամադրութեան տակ են , և շատ սակաւ կրնան բաւականացնել անոնք , որոնք

կամ հրջանիկ և կամ թշուառ են , ասոր համար է որ մասնաւորապէս յաճախ լռութիւնը երջանկութեան կամ թշուառութեան արտայայտիչը կը դառնայ : Սիրահարները ամենէն լատիւր կը հասկնան , երբ կը լսեն : Ծաղուրեանք ու զղացումով արտասանուած դամբանականները դրսի մարդիկը միայն կը յուզեն , իսկ մեռնողի այրին ու գուհներուն՝ ճաղըցուրտ և ուրիշ կերեւայ :

Գիրքովը կանգնած էր և կը լսէր : Երբ Ապօկիներ քանի մը ֆրազներ և բժշկի բայձը կոչուած , անձնորացութեան և ուրիշ բաներու մասին սրտասուեց , բժշկը մ'թագնած հարցուց :

— Երկուսր է ձամբան :
— Մտաւորապէս տասներեքէն տասնուչորս վերստ :

Ես սքանչելի ձիւր ունիմ բժիշկ : Պատուի իօսք կուտամ ձեզի , որ մէկ ժամէն ձեզ կը տանիմ և կը վերադարձնեմ : Մէկ ժամի գործ է :

Այս վերջին բառերը բժիշկի վրայ աւելի ազդեցին քան թէ մարդասիրութեան և բժիշկի կոչման ճառերը : Բիշ մը մտածելէն յետոյ ըսաւ բժիշկը հառաչելով .

— «Լաւ , երթանք :»

Արագութեամբ և հաստատ քայլերով առանձնասեւեակը գնաց , ու քիչ մը յետոյ երկար վերարկոյցով մը կ-

րեցաւ : Ուրախացած Ապօկիները դողդողացող ոտքերով կեցած սեղը կը դառնար . օգնելով ասոր իր վերարկուն հագնելու միասին տունէն դուրս եկաւ :

Դուրսը մութ էր , բայց նախասնեակէն աւելի լոյս : Մթութեան մէջ որոշ կը տեսնուէր բժշկի բարձր , քիչ մը առաջ ծոած հասակը իր երկայն նեղ մօրուքով ու արծուի քիթով : Ապօկիին դժգոյն դէմքէն զատ կը տեսնուէր նաեւ միայն իր մեծ զլուխը փոքրիկ ուսանողական գտակով . որ գանգը միայն կը ծածկէր :

— «Հաւատացէ՛ք ինձ , ես ձեր ազնուութիւնը գիտեմ գնահատել» — կը մրմնջէր Ապօկիներ բժշկին կողք նստելուն օգնելով . «Շտուով սեղ կը հասնինք , Սակայն գու , Լուկաս , բարեկամ , ըստ կարելոյն արագ քշէ՛ կը խնդրեմ քեզ» :

Կառապանը արագ կը քշէր : Ասենէն առաջ կարգ մը տարտամ շինութիւններու առջեւէն անցան , որոնք հիւանդանոցի բակի երկարութեամբ կը ձգուէին : Ամէն տեղ մութ էր , միայն բակի մէջ ինչ որ պատուհանէ մը զօրաւոր լոյս մը կարծակուէր , և հիւանդանոցի վերնաբարկի երեք պատուհանները աւելի լուսաւոր էին քան օդը :

Յետոյ կատար թանցր խաւարին մէջ կորաւ : Այստեղ խնուութեան հոտ

մը կը տարածուէր , որ սուսկի հոտին կը նմանէր , ծառերը կը սուսափէին , ագիտները անխնորոն աղմուկէն զարթնած կը հաւաքուէին սաղարթներուն վրայ և կսկսէին ցափ և ողբի ձիւր արձակել կարծես գիտէին թէ բժշկի դաւակն էր սեւեր և Ապօկիին կինն ալ հիւանդ ընկած է : Հիմայ մութի մէջէն կը յայտնուէին առանձին կանգնած ծառեր , մացաններ , մեծ ու սեւ սուկերին վրայ հանգչող ձկնոցը մեղմ կը ճառագայթէր և կտոբը գաշտավայրի երկարութեամբ կը գլորուէր : Ագիտներու կոչելը բոլոր կերպով կը լսուէր ճամբորդներու հետեւէն , որ շտուով լռեց :

Գրեթէ լոլոր ճամբորդութեան միջոցին Գիրքովը ու Ապօկիներ լռեցին : Միայն անգամ մը խոր հատնչելով մրմնջեց Ապօկիներ .

— «Նաւալի վիճակ , մարդ իւրային» : Երբ երբէք այնքան շատ չի սիրեք քան երբ անոնք կորսուին :—

Եւ երբ կտոբը գետի մը մէջէն կամաց կանցէր Գիրքովը ուղղուեցաւ , կարծես կը վախնար ջրի ծրփանքէն և սկսեց նստած սեղը անհանգիստ ետ ու առաջ շարժուիլ :

(Շարունակելի)

Սօֆիա, 10 փետր. 1904

Հարցում մը Աղքատախնամի ասօժանակեայ վարչութեան

Մտաւորապէս 9-10 ամիս է որ տեղւոյս Աղքատախնամ ընկերութիւնը գոյութիւն ստացած է, և հազիւ 4 ամիսի չափ կանոնաւոր շարունակած ցաւալի է որ 4-5 ամիսներէ ի վեր ոչ ժողովներ ունեցած ենք և ոչ ալ բաժնեգրիներու գանձում:

Արդ կը հարցունենք ձեզ, թէ ի՞նչու երբ աղքատ ընկերակալ մը և կամ անկարող հիւանդ մը կուենանք ժողովուրդին կը դիմել զայն խնամելու և կամ թաղումը կատարելու, ի՞նչու որ ժողովուրդին համար հանելուկ մը եղաւ աս:

Ուտի ստիպում ենք հարցնել Աղքատախնամի վարչներուն, թէ ինչ մտադիր է ընել այս առթիւ, ըստ իս կամ ընդհանուր ժողով մը գումարելով հաշիւները ներկայացնել և կամ բացատրութիւն մը առ հրապարակաւ, կապանք:

Անդամ մը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական թերթ մը կը գրէ, որ պատերազմի ծագելէն պուկար կառավարութիւնը շատ գոհ մնացած է, որովհետեւ պուկարիա առիթէն օգտուելով կուզէ Մակեդոնական հարցը իր ուզած ձևով լուծել:

— Սօֆիայէն ռուս թերթի մը հեռագրուած է, թէ Պուկարիա խաղաղութիւն կուզէ, բայց պատերազմի կը պատրաստուի:

— Իշխանը հեռագրով շնորհաւորեր է և յաջողութիւն ցանկացեր հրամանատար Քուրաթովքիին ու իշխան Նիկոլին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Ռուսական թերթերը խելակորոյս ալ ու ձախ կը հարուածեն Անգլիան, իրենց պատմական թշնամին, և հայհոյանքներու տարափ մը տեղացին անգլիական մամուլին վրայ, որու միակ յանցանքը եղած է իրերը ներկայացնել իրենց ճշգրիտ գոյնը:

— «Ինֆորմացիօն» ջրելով գերմ. թերթերու այն տեղեկութիւնները, թէ Ռուսիա Մայրագոյն Արեւելքի մէջ ունի 5-600000 զօրք կը յայտնէ, որ Ռուսիա ունի միայն 160,000 զօրք, որմէ մէկ երրորդը հազիւ կրնայ պատերազմի մէջ գործածել:

— Վատիվօսօքի մէջ հուշակուած է պատերազմական դրութիւն:

— Եալու գետի ափերուն վրայ զարնուած են թշնամի յառաջապահները: Ռուսերը 2500 հոգի կորսնցնելով ետ են քաշուած:

— Գերմ. կայսրը ձարոնիոյ տրամագրութեան տակ գրած է Մայրագոյն Արեւելքի գերմ. հիւանդանոցները:

— Ռուս վաճառականները 50 միլիոն ռուպլի հանքանակած են ի նպաստ պատերազմին:

Ռուս վաճառականը մարդ է և կը կատարէ իր հայրենասիրական պարտականութիւնը: Իսկ ի՞նչ կընէ հայ վաճառականը...

— Յարը հրովարտակով մը հըրամայած է պատերազմական տորմիզը զօրացնելու համար կամուտը հանքանակութիւններ ընել և այս նպատակով կազմել յանձնաժողով մը:

— Վիէնայի խաղաղասիրական ընկերութիւնը պարոնուհի Սուլթանը Նախագահութեան տակ ժողով ունենալով ընդունուած բանաձև մը, որ պետութեանց զըրկելով առաջարկած է լանուս մտրգասիրութեան և քաղաքակրթութեան միջամտել և խնդիրը յանձնել Լահէի առեանին:

— Խշնամի բանակները երկու կողմէ ալ կը յառաջանան դէպի Եալուի ափերը և կը սփռեն սապատակներ: Եառաջապահները արդէն սկսած են զիրար տեսնել:

Ռուսական սպայապետը բանակ զարկած է Քարպինի մէջ: Քարաթովքիին տեղ պատերազմ նախարար նշանակուած է զօրապետ Սախարով: Ռուսական նաւատորմիզը կրած է նոր պարտութիւններ և մնացածը անգործութեան դատապարտուած: Մովի վրայ Ռուսիա այլևս յաղթուած կը սեպուի: Մինչև հիմա ցամաքի վրայ ալ բազմա ճարտարներուն հետ էր:

— Ռուսական նշաններ ցոյց տալով ճարտարները Բօրթ-Արթուրէն դուրս հանած են չորս ռուսական թօրքէտո հալածող նաւեր և չորսն ալ գերի բռնած են, ճարտարական 3 գունտեր 25 մուլրօ ելած են և ուղղուած դէպի հիւսիս, Իֆօէնկեանկ:

— Վատիվօսօքի ռուս տորմիզը ուզած է Հաքօտաթէ ձարոն քաղաքը ոմբակոծել, բայց չէ յաջողած:

— 25 մուլրօի կուռէն սպասուող 325 ռուս նաւաստիներ անգլիական նաւեր սպաստանած են և Աէյոն փոխադրուած:

— ձարոնական Կարմիր Խաչը 800,000 անգամ ունի և տարեկան մուտքն է 42 միլիոն ֆր.: Ռուս Կարմիր Խաչը 1200 կէս միլիոն ռուպլի հարստութիւն ունի:

— Ռուսիա նոր յիշատակագրով մը կը մեկադրէ ձարոնիան, որ ան չէ յարգած միջազգային օրէնքները:

— Ամերիկեան զրահաւորներ երեցած են Եալուի թերանը, Այս քայլը կը նկատուի հակառուսական ցոյց մը:

— Զինաստան 5000 հեծելազօրք զրկած է դէպի հիւսիս: Եւրոպէս այս կը նկատուի հակառուսական ցոյց մը:

— Ամերիկացի մը մօտէն ծանօթանալով կը դովէ ճարտարական սպայազուեղին կանոնաւորութիւնը:

— Քարպին, որ հիմա տարօրինակաբար դարձած է բանակատեղի, քանի մը տուններով պղտիկ գիւղ մըն է: Այս ընդորութիւնը տարօրինակ է նաեւ անոր համար, որ Քարպին Բօրթ-Արթուրէն 1000 քիլօմէթր հեռու կը գտնուի: Ռուսները Բօրթ-Արթուրի և Մանչուրիոյ մեծ մասին առանց լուրջ գիմադրութեան տէր պիտի կարողանան դառնալ հարսնացիները:

— Թօքթօէ կը հեռագրուի, որ Բօրթ-Արթուրի առջև տեղի ունեցած է նոր կռիւ մը:

— Ռուսական Օրէլ և Ամօլէնսք նաւերը պաշարով և սպառածութեամբ չափազանցած են Սուէզը:

— Երեք անգլիացի սպաներ, որոնք երկու զրահաւորներ տարած են ձարոնիա, արժանացած են Միքատօի կողմէ մեծ պատիւներու:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Իուռը երկու պետութեանց զեսպաններուն լմացուցած է, որ փետրուար 3ին շէթայի մը և զօրքերուն մէջ տեղի ունեցած կռուին մէջ 10 յեղափոխական ինկած են, որոնց վրայ դանուած են գէնքեր ու ումբեր: Գլխարկներուն վրայ գրուած է եղբւր մահ կամ ազատութիւն: Խումբին առաջնորդը եղած է Թօլէ անուն հարիւրապետ մը:

— Մակեդոնական գիւղի մը մէջ թիւրք զօրքը անարգած ու կողոպտելէ ետք կործանած է եկեղեցի մը:

— Խիւրքիան ձէնօլայի մէջ ապսպրած է 5 թօրքիտօներ:

— Նիւ-Եօքէն «Սայթի» կը հեռագրեն, որ Վաշինկթօնի թիւրք զեսպանը, յայտնած է, թէ թիւրք Պուկարիական պատերազմը անխուսափելի պիտի ըլլայ:

— Ալպանական ապստամբութեան վայրը՝ ձարօվա կեդրոնացած են 25 թրքական զնտեր:

— Գրաքննութիւնը Պոլսոյ թերթերուն արգիլած Ռուս-ձարոնական պատերազմին վրայ հեռագիրներ հաղորդել և եւրոպական թերթերէ քաղուածներ ընել:

— «Նօվօսթի» ռուս թերթը կը գրէ, որ անգլիական միջամտութեան մը վախճանով, թիւրքի մէջ պատերազմի կուռակիցները կուզեն անպատճառ Պուկարիոյ հետ զարնուի: Ինչպէս յայտնի է Անգլիա յայտարարած է, որ երբ Միւլցըլթէկի ծրագիրը չը գործա

գրուի ինք ստիպուած պիտի ըլլայ Պերլինի 24րդ. յօդուածը գործադրել առ:

— «Ինֆորմացիօն» կը հաղորդէ, թէ Ալպանացիք կը պատրաստուին զարնան ընդհանուր ապստամբութիւն մը հանելու: Կարիպալտի իր Իտալացի կամաւորներով կը սպասուի կամ Ալպանիա կամ Մակեդոնիա:

— Ճէլլալէատին փաշայ, Սուլթանի հետ մօտ յարաբերութիւն ունեցող մարդ մը, Պօլսէն փախած է Եգիպտոս և յետոյ Սուլթանէն ներողութիւն խնդրած:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գրանի մը գործարաններու բանուները իբրևուք ստացած են օրական միայն 8 ժամ աշխատիլ:

ԱՆԳԼԻԱ

Լօրտ Բօպէթը և ուրիշ բարձրագոյն սպաներ առանց լուրջ պատճառի պատերազմական նախարարութեան կողմէ պաշտօնանկ եղած են:

ՊԵՂՃԻԳԱ

Աղամանդի վրայ աշխատող բանուները գործադուլ ըրած են Պրիւքսէլի մէջ, Ամսթէրտամի բանուները հետեւած են նշանին:

Ի Տ Ս Ւ Լ Ի Ա

Իտալիա սենդոտ եռանգով կը շինէ իր բանակը և նաւատորմիզը, թերեւս արեւելեան խնդրին մէջ գեր մը խաղալու համար:

Ս Պ Ա Ն Ի Ա

Հանրապետականները յառաջ բերած են խռովութիւններ: Ռուսականութիւնը միջամտած է և զէնք գործածած: Կան շատ մը վիրաւորեալներ:

Ա Չ Գ

Ֆիլիպպի մեր գործակատարն է Նազարէթի Գեօրգիան, որուն մեր բաժանորդները թող հաճին յանձնել իրենց բոժնեգրիները, ընկալազիրներու փոխարէն:

ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Տէր Տպարան Արեւելեանի

Է. Ա. Ա. Ա. Ա. Ա.

ԿՈՎԿԱՍՏԱՆՆ ՎԷՐՔԵՐ

Գին 3 ֆր. 20 սվ.

Գրանու համար գիմել վառնա Բարկէն Սիւնի ընթացարանին վարչութեան: ձանապարհածախսը գնողին վրայ է: Դրամը կանխիկ վճարելի:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Цедатинча „Взаимность“ Варна